ՄԱՆՐԱԼՈՒՐՔ·

Կենդանի մարդու ուղեղի լուսանկարը. Վերջին օրերի ամենանշանաւոր դէպքը, ինչպէս «Արարատի» ընթերցողներին հաղորդել էինք, Ռեօնտգէնի գիւտն է, որով կարելի է այժմ միանգամայն անտեսանելի առարկաների լուսանկարը հանել: Թէ եւրոպական եւ թէ Ռուսաստանի թերթերը հաղորդում են այն յառաջադիմութեան մասին որ մարդկային հնարագիտութիւնն անում է այդ նոր ճիւղի մէջ: Այսպէս, օրինակ, փայտեայ եւ մետաղեայ արկղների մէջ փակուած իրերի եւ կենդանի մարդու ոսկրների լուսանկարից յետոյ՝ այժմ յաջողուել է հանել նաեւ կենդանի մարդու ուղեղի լուսանկարը: Նոյն Ռեօնտգէնի գիւտի վրայ հիմնուելով՝ մի իտալացի գիտնական հնարել է մի նոր գործիք, որ կարելի էր անուանել *ծածկադիտակ* (cryptoscope), որով Ռեօնտգէնի ճառագայթների շնորհիւ կարելի է ծածկած իրերը լաւ տեսնել ու դիտել, առանց նոցա նկարը հանելու:

Մեծագումար նուիրաբերութիւններ. Մոսկուայի գրագիտութիւն տարածող յանձնախմբին մի անյայտ մնալ ցանկացող ռուս պարոն 65,000 ռուբլի է նուիրել ժողովրդական ծրի գրադարաններ եւ կիրակնօրեայ դպրոցներ բանալու համար:

Մոսկուայի յայտնի բժիշկ Զախարինը կէս միլիոն ռուբլի է նուիրել եկեղեցական ծխական դպրոցներ բանալու համար:

Հիւսիսային բեւեռի յայտնագործութիւնը երեւում է թէ արդէն իսկ կատարուած իրողութիւն է: Սկանդինաւիացի Նանսէն ճանապարհորդը արդէն հասել է հիւսիսային բեւեռին եւ այդտեղից վերադարձել Սիբիրի կողմը. եթէ այս լուրն ստուգուի, այն ժամանակ գիտական հետազօտութեան համար մի նոր աշխարհ եւս կը բացուի:

1900 թուականի Փարիզի աշխարհահանդէսն արդէն վճռուած է. այդ հանդիսի գրաւիչ նորութիւններից մէկն էլ պիտի լինի հին Փարիզի վերականգնումն: Մի ընդարձակ դաշտի վրայ պիտի կառուցանուեն հին Փարիզի փողոցներն եւ յայտնի աշտարակներն ու եկեղեցիք:

Լրագրական յօդուածների գործատուն են բաց արել հրեայ շահագործողներ Բեռլինում: Այս գործարանի յայտարարութեան մէջ ասուած է, որ գործարանը յանձն է առնում «ամենայն նիւթ» մատակարարել գաւառական մամուլին. ծախու առաջարկուում են՝ առաջնորդող յօդուածներ, տօնական բանաստեղծութիւններ, նորաւէպեր, եկեղեցական եւ հայրենասիրական տօների համար յօդուածներ: Այս նիւթերը պատուէր տուող խմբագրութիւնների համար տպագրուած պիտի ուղարկուեն, միայն թէ խնդրում են, որ պատուէր տուողները հաճին ամէն անգամ ցանկացած նիւթի տեսակը նշանակել, թէ օրինակ՝ բարեպաշտակա՞ն, կրօնակա՞ն, կաթոլիկակա՞ն, բողոքակա՞ն, բարոյակա՞ն, երգիծաբանակա՞ն, պատմակա՞ն, հայրենասիրակա՞ն, ազատամտակա՞ն, եւն. տեսակներից ո՞րն են կամենում: Ահա ի՞նչպէս է պատրաստուում հասարակական կարծիքն Եւրոպայում:

Իտալական L' Illustrazione Italiana *հանդիսի տարեմուտ 2 համարում, որ միւսներից յետոյ նորերս միայն ստացանք, գտնում ենք Գամառ-Քաթիպայի «ազատ երգերից» եօթի իտալերէն թարգմանութիւնը,* Canti degli Armeni *ընդհանուր վերնագրով: Իտալերէն թարգմանութիւնը կատարուած է պ. Տիգրան Երկաթի Ֆրանս. թարգմանութիւնից, որ իւր ժամանակին տպուած էր* Revue des Revues *հանդիսում:*

Իտալական հանդիսի խմբագրութիւնը իւր կողմից մի կարեկցական խօսք ասելով վերջին դէպքերի առթիւ՝ գովասանքով է խօսում հայոց գրականութեան եւ յատկապէս Գամառ-Քաթիպայի մասին, որի վերաբերութեամբ յառաջ է բերում նաեւ մի քանի կենսական տեղեկութիւններ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ·

1. ԱՆՄԱՀ Խաչեցեալը . . Ե. Վ. 405
2. ՀԱԻԱՏՈՑ զօրութիւնը եւ արդիւնքը Ե. Վ. . 407
3. Ս. ԳՐՔԻ համաբարբառը 414
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 420

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ·

5. ԱՂՕԹՔ (ոտանաւոր) . Ա. Մամիկոնեան 423
6. Պատմ. Աղուանից (շարունակութիւն) Խ. Վ. 423
7 Սասանեան Տէրութեան պատ- . . .
մութիւն (վերջ) . Ն. Զարամեանց. . . 429

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ·

8. ԲՐԻՍՍԵԼԻ ազատ համալսարանը . . . 431
9. ՇԱՓՈՆԱԿԱՆ ժողովրդական դպրոցները . . 432
10 Դերսիմ (Շարունակութիւն . Ս. Հայկունի 433
11. ՎԻՇԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Պարսկ. Ղարաղաղ
գաւառի . . . . Ա. Ա. . . 433

ԱԶԳԱՅԻՆ·

12. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ Եկեղեցին Պարսկահայքում
եւ հեռաւոր գաղութներում 437
Մայր Աթոռ. . . . . .
13. Երեւանի թեմ. (Տաթեւ.) . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆԵՔ·

ՇԱՒԵԼՈՒԱԾ·
Ասանիա Շիրակացի
ՄԱՆՐԱԼՈՒՐՔ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՇԱՀՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ